ւորն միայն զԱյրն բաժանորդ ասաց, իսկ Հայք տիրեցին միոյ մասին եկեղեցւոյն. բայց 'ի մերձ ժամանակի ըստ զօրութեան հրովարտակին, որով առաք զայն 'ի ձեռաց Լատինաց, արտաքսեմք նաեւ անտի զՀայս. զայս և Դատաւորն ծանուցանէր ծածկապէս լուեալ 'ի գլխաւորացն Ցունաց։ Զայսոսիկ գրէ Թէոդորոս 'ի Կոստանդինուպոլիս և պատուիրէ արթուն լինիլ, եւ եթէ հնար իցէ առնուլ նոր հրովարտակ. զի յերկաթեայ դրանէ մինչեւ ցԱյրն լինել բաժանորդ, որպէս գրի յերկրորդ հրովարտակին։ Ցոյնք յառաջագոյն զարդարեալ էին կանթեղօք զսիւնազարդ դաւիթն եկեղեցւոյն եւ 'ի ժամանակս բաժանորդութեան Դատաւորն ոչ եթող Հայոց կախել կանթեղս և վարագոյրս հաւասար Ցունաց, որով այժմ բռնացեալ արդելին նաեւ զկանթեղն 'ի վերայ դրան վանաց։

Զկնի մեկնելոյ Նուրի Էֆէնտեայ յերուսաղէմէ, բըռնացան այլազգիք 'ի վերայ Հայոց և պահանջէին 'ի նոցանէ զգումարս դրամոց, որոց պարագլուխ էր դռնապանն Ս. Յարութեան, որպէս թէ զնոյն տաճար ինքեանք չնորհեալ են Հայոց, և յայտնապէս ասէին. թէպէտեւ Թագաւորն ետ ձեզ հրովարտակ, սակայն Տէր երկրին մեք եմք։ Զայս ամենայն գրեալ ծանոյց Թէոդորոս առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս, և խնդրէր գտանել հնարս ազատութեան. զի եթէ ասէ գիտէաք թէ ոչ բարկանայ Տէրութիւնն և չարգելուն զմեզ փոխատուք, թողեալ զամենայնն 'ի բաց ելանէաք ասսի, ('ի 24 Ցունվարի)։ Փոխանորդ Պօղոս վարդապետն ըմբռնեալ 'ի ժանտախտէ՝ ազատեցաւ 'ի ձեռն դարմանի բժշկաց։

Հայք 'ի սկզբան անդ ոչ կամեցան թշնամանալ նաեւ ընդ Լատինս, և լուեցին յորժամ ընդդէմ կացին նոքա 'ի կախել զմի կանթեղ 'ի վերայ աստիճանաց հիւսիսային դրան Այրին, և տեղի ետուն քրտինջանաց նոցին վասն պատարագին, եւ եդին պայման կատարել զայն զկնի նոցին առանց խռովութեան։ Եւ ոչ կամէին ցրտանալ 'ի բարեկամութենէ, զոր ունէին յաւուրց անտի այրելոյ Ս. Յարութեան. նոքա եւս վշտացեալ էին 'ի Ցունաց վասն բազմադիմի վնասուցն զոր կրեցին. զի 'ի շինութեան տաճարին այլայլեցին զձեւ Գերեզմանին, և խափանեցին զպա-